

ԱՐԵԱԿ ՍԱՖՐԱՍՏԵԱՆ

**ՔՍԵՆՈԹՈՒԻ ՈՒՂԵԳԻՇԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻջնուկ**

Հայ պարբերական մամուլին մէջ «ՎԵՄ»ը եղաւ առաջինը հրատարակելու մի դիտական քննադատութիւն վերոգրեալ մակդիր կը բազ իմ ուսումնասիրութեան մասին։ Հին Հայաստանի պատմութեան տեսակէտէն յոյժ հետաքրքրական է նիւթը։ Արեւմուտքի բոլոր մեծ երկիրների մէջ բարձրագոյն կրթութեան անբաժանելի մասը կը կազմեն 10,000 յոյն վարձկանների արշաւը դէպի Բարելոն, եւ ապա անոնց ողիսական նահանջը Քիւրտիստանի եւ Հայաստանի միջով առ Սեւ Ծովը։ Արեւմտեան ազգերէ աւելի մեղ պէտք է հետաքրքրէ Քսենոֆոնի Անարասիս, որովհետեւ անոր բովանդակած որոշ մանրամասնութիւնքը հին Հայաստանի մասին անգնահատելի լոյս կը սփոքն այլապէս մեղ անծանօթ մի շրջանի վրա։ այն է Ե. Պարու ըսկիզբները Ք. Ա.։

Պ. Յ. Զ(աւրեան)ի քննադատութիւնը \*) ըստ ամենայնի լուսաբանող եւ չահեկան է։ Նահանջ Բիւրուց-ի հրամանատարը՝ Քսենոփոն մեղ կուտայ որոշ տեղեկութիւններ Հայաստանի մէջ իր տեսածների եւ լսածների մասին։ Մենք կարող ենք բանաւորապէս ընդլայնել այդ տեղեկութիւնները մեր պատմութեան նմանօրինակ հանգամանքներով, եւ վերականգնել ծանօթ դարաշրջանի հայ ժողովրդի վիճակը՝ փաստացի վիճարանութիւններով։ Պատմաքննական եւ բանասիրական լուրջ աշխատանք պահանջող գործ է։ Դրա համար անհրաժեշտ է դասական կրթութիւն եւ հին յունարէն լեզւի ծանօթութիւն։ Պայմաններ զորս լիսապէս կը լրացնէ պ. Յ. Զաւրեան։

Այսուեղ ես սլէտք է անեմ մի քանի բնադրական նկատողութիւններ պ. Յ. Զաւրեանի գրախօսականի մասին՝ ապագային հաւանական թիւրիմացութիւններ կանխելու համար։ Մի էական կէտ, որի վրա դրած են խնդիրն ուսումնասիրող եւրոպացի եւ ամերիկացի գիտնականներ, Անարասիսի-ի մի տողն է. այսինքն LV 4. 3:

\*) Տես «ՎԵՄ», 1935 թ., թիւ 1.

Բնագրերից ոմանց մէջ այդ տողի մեխրի (մինչեւ) բառը դորձածւած է երեք զրեթէ նոյնիմաստ, բայց եւ այնպէս քերականական որոշ զանազանութիւններով։ Բառը կընայ առնւիլ թէ իրեւմակրայ եւ թէ իրրեւ նախազրութիւն։ Մեծ հեղինակութիւն համարւած երկու գիտնականներ, Rehdantz և Nall, վերեւ յիշւած տողում մեխրի լնդունում են որպէս չաղկապ եւ թարգմանում են so long as, until. այսինքն մինչեւ որ նրանք (յոյներ) անցան Տիգրիս գետի ակունքների շուրջը։

Այս տողերը զրելու բոսկին ձեռքիս տակ են 24 հեղինակութիւններ ամէն լեզուներով, թէ Անարասիս-ի բնագրերը եւ թէ թարգմանութիւններ։ Գրեթէ ամէնքն ալ այդ հատւածը թարգմանել են ըստ վերնոյն։ Մի քանիսը շուրջ կամ շուրջով բառի կողքին զետեղել են հարցական նշան։ Իմ կարծիքով Քսենոփոնի արտայայտութեան դժւարութիւնը ծագել է այն բանէն, որ հէնց ինք հելլէն հըրամանատարը ասկահով չէր թէ ինչպէս պէտք էր նկարագրել իր գիրքը գետի վերաբերմամբ։ Խնդրոյ առարկայ տեղն է Քուֆրայի եւ Զէվիսօրի միջոցը, ուր Շիրվան - Սու զանազան ճիւղերով կը հոսի դէպի Քէսէր-Սու։ Շիրվան-Սու կը գայ հիւսիս-արեւելքէն բազմաթիւ ձորակների միջով եւ ոլորապտոյս դնացքով։ Առանց ունենալու տեղական ստոյգ ծանօթութիւն, դժւարին է ըսել թէ որոշ կէտի վրա հոսող առւակը գետի ա՞կն է, թէ մի այլ վտակ, զոր կարած անցած էինք կէս ժամ ստած։ Ըստ իմ ուսումնասիրութեան, յոյները անցնելէ յետոյ Կենտրիտէս (Բօհատան - Սու) եւ Սղերդն ի վեր առաջանալով՝ երբ հասան Քուֆրա, փոխանակ շարունակելու իրենց ճանապարհը Քէսէր-Սու եւ Բիտլիս-Զայն ի վեր, հետեւեցան Շիրվան - Սուի ընթացքին, կարծելով որ այդ էր բուն Տիգրիսը։ Որովհետեւ երկու բնական օժեւանները թէ Քիւֆրա եւ թէ Զէվիսօր, բաւական հեռու են Քէսէր-Սուի ափերէն, եւ աւելի մօտ Շիրվան-Սուի զանազան ճիւղերին։

Շիրվանի գաւառէն դէպի Խիզան տանող ճանապարհը կանցնի իրուն ձորի միջով, որ ունի մօտ 18 մղոն երկայնութիւն։ Էրունի հարաւային բլուրներէն կը հոսի բաւական ստւար մի ջուր, զոր Բոհտա գետի հիւսիսը երկարող հովիտների մէջ շրջան ընելէ յետոյ Քիւֆրայն հեռու կը թափի Քէսէր-Սու։ Սա էլ կը կոչւի Քիւֆրա-Զայ։ 1908-ի յունաւարին Սղերդ քաղաքէն կը վերադառնայի դէպի Բիտլիս։ Ճանապարհի առաջին մասում ձիւն չկար։ Աղճնեաց աշխարհի այդ մասը ձմեռնային անձեւների շրջան է։ Այդ պատճառաւ ցեխը շատ խոր էր։ Նախապէս այդ մարզերէն անցած էի մի քանի անգամ։ Մութ գիշերին կորսնցուցի ճանապարհը։ Ինձ ուղեկցող տեղակ.

ոստիկանը Քիւֆրա-Զայը շփոթեց Շիրվան-Սուխ հետ, եւ այդ պատճառաւ երկու ժամ աւելի թափառեցանք մինչեւ որ գտանք գիշերային օթեւանը ի Զէվիսօր։ Յէշեցի այս անձնական վորձառութիւնը ապացուցանելու համար, թէ այդ ջրառատ հովիտների մէջ որչափ դժւար է գտնել «Տիգրիսի ակունքը»։

Պ. Զաւրեան բոլորովին կը սխալի կարծելու, որ ես վոխած եմ յունարէն բնագիրը՝ ուղեղիծը յարմարեցնելու համար իմ տեսակէտին։ Ընդհակառակին, ես քննել եմ միակ հնարաւորութիւնը՝ համաձայն եւրոպական հեղինակաւոր թարգմանիչների մեկնութեան։ Եւրոպական առաջնակարգ մասնագէտներէ ոմանք արդէն յայտնել են իրենց համամտութիւնը իմ առաջարկած ուղեղծին։ Petermanns «Geographische Mitteilungen»-ում (Ապրիլ 1935, էջ 126) Պրոֆ. Օբրուչովմէր խոստովանում է, որ յոյները ոչինչ գիտէին Հայաստանի մասին, իսկ ներկայ Արեւմուտքը շատ քիչ աւելին. իբրև ապացոյց կը յիշէ նոյնիսկ սպայակոյտների անբաւական քարտէզները։ Նա կը յաւելու, որ հայ հեղինակը միայն կարող է լաւ ճանաչել իր սեհհական երկիրը եւ մեկնարանե Անարակիս։ «Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes» - ի ներկայ տարւոյ Բ. սլրակին մէջ (էջ 265-266) յայտնի արեւելագէտ Կ. Մրակը դրած է մի հոյակապ գրախօսական, յայտնելով իր հաւանութիւնը իմ առաջարկած լուծման։ Երկարապատում է ջերով Պրոֆ. Լէման-Հառուպտ կը կարծէր լուծած լինել հարցը։ Սակայն, ինչպէս ասում է Մլակը, իմ փորձը որեւ է հարցի լուծման մի նոր եւ աւելի համոզիչ առաջարկ։ Պ. Զաւրեան կը յանձնարարէ Տեւերոսա անունը բացատրել հնչարանական սկզբունքով։ Հելլէնները դրեթէ բոլոր օտարականները կանունէին բարբարոս։ Գործնական կեանքի մէջ այդ բառը կը նշանակէր ոչ միայն հելլէն մշակոյթէն եւ օրէնքէն դուրս ունեող օտարականներ, այլ եւ կը բովանդակէր մի տեսակ արհամարհանքի, ինչպէս անդ։ Թարիյն բառը մինչեւ վերջին ժամանակ- ւու։ Ուրեմն, Քսենոփոնի համար օտար անուններ մատչելի էին այնչափով, ինչ չափով որ կարելի է նրանք մերձեցնել մի ո եւ է հելլէնական անւան։ Ալդակիսի հանումանքների մէջ հնչարանական կոնոններ շատ քիչ գեր կրնան կատարել դիւրացնելու լուծումը առաջարւած ինդրին։ Ո եւ է կասկած չի կարող լինել, որ Տեւերոսա գետի անունով Քսենոփոն կահնարկէ Տրպատունեաց տանուտէրութեան գաւառին եւ գետին։ Ուրեմն, յոյները յառաջացան Շիրման գետն ի վեր դէպի Խիզան, Մոկք եւ ապա Տրպատունիք՝ Վանայ ծովու հարաւ-արեւելեան անկիւնին։

Եւրոպացի գիտնականներ Տելէբոասը նոյնացրած են Տարօնի գաւառի Գարա-Սուի հետ։ Եթէ յոյներ անցած լինէին Տարօնով, ապահովաբար Թաւնոփոն պիտի յլէշը մի այլ անուն։ Աչա թէ ինչո՞ւ։ Բայ Տարօնի ժողովրդի սովորութեան Գարա-Սուի հայկ. անունն է Մեղրագետ։ Զորբորդ տառը թ ակներեւօքէն արդիւնք է ժողովրդական ստուգաբանութեան։ Գետին հին-հայկական անունն է Մեղ։ (Տես Անանիա Շիրակացի. տպ. Սուբրեան, էջ 31. նաեւ Հիւրշմանի Altarmenische Ortsnamen. էջ 323, ու Մարկուարտի Sûdarmenien und die Tigrisquellen, էջ 68, եւ մանաւանդ էջ 203-204 հոյակապ համեմատութիւնները)։ Մեր լեզվին մէջ լծորդ տառերն են և եւ դ. ուրեմն եւ նախահնդեւրոպական հայերէնի մէջ անունն էր հաւանաբար Մել։ Այժմ խաստի սեպազրերը հին-հայկական տեղանուններն, ինչպէս նաեւ Հայաստանի պատմութիւնը ետ կը տանին մինչեւ 1500 թ. Ա.։ Եւ իսկապէս ալ իմիլ Ֆորբէր այդ սեպազրերէն թարգմանած է խաստի թագաւոր Մուրշիլ Բ.-ի եւ Աչի-Խայսա (Բարձր-Տուրուբերան) երկրի թագաւոր Աննիայի միջեւ կնքած դաշնապիրը (1345-1320 թ. Ա.։)։ Այդ դաշնապիրն մէջ իրեւ սահման երկու պետութեանց յիշւած է Մալա գետը, զոր առընչութեամբ անդը յիշւած այլ անուններին եւ տեղազրական մանրամասներով, նոյնացուցած եմ Մեղրագետին հետ։ Այդ դաշնապիրն մէջ հիանալի կերպով ի յայտ կուգան հին հայկ. սրբավայրերն ու պատմական քաղաքները Եկեղեց գտաւոքն մինչեւ Տարօն եւ Վանայ ծով։ Եթէ Անանիա Շիրակացու կամ Մ. Խորինացու Ժամանակ պահւած էր Մեղ գետառնը, անհնարին է որ նա գոյութիւն չունենար նաեւ Քսենոփոնի ժամանակ։

Ինչպէս մինչեւ այսօր, այնչափ ուժեղ էր նահանդավային հայրենասիրութիւնը մէր նախահայրերի մէջ, որ անոնք դժւար կը հրաժարէին հին անուններէ։

Արդէն բաւական հեռացայ նիւթէն։ Նմանօրինակ մանրամասներով կարելի է լուսաբանել պ. Զաւրեանի յարուցած միւս խնդիրները։

Արդէն կը պատրաստեմ մի լիակատար ուսումնասիրութիւն Քսենոփոնի ուղեգծի մասին մեր լեզով, ձօնելու Հայաստանում նորերս կաղմակերպւած Հայ Աշխարհազրական Բնկերութեան։

Լոնդոն



ՆԱԽՈԹՈՒԹԻՒՆ Պ. Յ. Զ.-ի ԿՈՂՄԻՑ - «Վ.Է»-ի խմբագրութեան առաջարկութեամբ կցում եմ պ. Սաֆրաստեանի յօդւածին

ներկայ հակիրճ առարկութիւնը, թէեւ պէտք է ասեմ, որ ես հակառակ եմ քննադատական դիտողութիւնների առթիւ բանակոիւ յարուցանելու ձեւին :

Պ. Սաֆրաստեանը, իր աժելով, շատ լաւ ծանօթ է Հայաստանի այն մասին, որտեղից անցել են Քսենոֆոնի յոյները, եւ ես իմ գրախօսականի մէջ առանձնապէս ընդգծել եմ այդ պարագան : Պ. Սաֆրաստեանը շատ լաւ գիտէ, որ հին Հյաստանի աշխարհագրական անումների խնդիրը հիանալի կերպով մշակւած է մի շարք ականաւոր գիտնականների կողմէց (Հիւրցման, Մարքուարտ, Հոնիգման եւ մասամբ, պրոֆ. Ն. Աղոնց) եւ այս փաստը ըստ ամենայնի հեշտացնում է աշխարհագրական ճշտումների գործը . հարցը միայն ձեւի մէջ է : Մեր վէճը պ. Սաֆրաստեանի հետ, եթէ միայն եղածը կարելի է համարել վէճ, աւելի մեթոտի վէճ է :

Իր աշխատանքին ձեռնարկելիս, պ. Սաֆրաստեանը ունեցել է 24 ուսումնասիրութիւն տւեալ հարցի մասին, 25-րդն էլ պէտք է հաշել ՔսենոՓոնի գրքի բնագիրը, որը, ըստ երեւոյթին, պ. Սաֆրաստեանը կարդում է յունարէն : Հակածառելով ինձ՝ պ. Սաֆրաստեանը բաւական երկար խօսում է «մեխրի» բառի մասին, որ թարգմանում է «so long as» : Եթէ նա ուշադրութեամբ կարդացած լինէր գրախօսականը, կը տեսնէր, անշուշտ, որ ես էլ այդ բառը թարգմանել եմ նոյն իմաստով՝ «մինչեւ» : Վիճելին ո՛չ թէ այդ բառն է, այլ hupererhomai<sup>\*)</sup> բայը, որ ես թարգմանել եմ «կտրեցին Տիգրիս գետի ակունքները», իսկ պ. Սաֆրաստեանը՝ «they (had) passed beyond (?) the sources of the river Tigris» : Ճիշտ է, ուսումնասիրողներից ոմանք ներկայ դէպքում, այս բառին տալիս են քմօտից անցնելու իմաստ, բայց նախ դնում են հարցական նշան, ասել է բոլորովին վստահ չեն, երկրորդ՝ «մօտից անցնել» հասկանում են ճանապարհը նախկին ուղղութեամբ շարունակելու ասումով, որ տւեալ դէպքում նշանակում է՝ շարժւիլ դէպի հիւսիս . ուսումնասիրողներից ոչ մէկը այդ բայը չի առնում թեքւելու, ուղղութիւնը փոխելու իմաստով :

Սակայն, պ. Սաֆրաստեանը անպատճառ ուզում է, որ յոյները դէպի հիւսիս տանող եւ բոլորի կողմից ընդունեած ճանապարհից դարձած լինին արեւելեան ուղղութեամբ : Իր այդ ցանկութիւնը հիմնաւորելու համար նա շատ ինքնատիպ բացատրութիւն է առաջ բերում : Դուրս է գալիս, որ հիւսիսի ճանապարհը դէպի արեւելք փո-

<sup>\*)</sup> Բոլոր բառարաններում այս բառը թարգմանած է to come or go out over, pass over.

խելս յոյն զօրավարները առաջնորդւել են «ճանապարհի բնագլով»—աւելի ճիշտ, «Ճիու բնագլով»—hore sense բայց զգալով, որ միայն «Ճիու բնագլը» բաւական չէ, պ. Սաֆրաստեանը առաջ է բերում եւ մի ուրիշ ոչ պակաս քմահաճ հիմնաւորում։ Դնո. Հիւրշմանը վանի հարաւ-արեւելեան եղերքին տեղաւորել էր Տրպատունիք նախարարութիւնը, որ իր անունը ստացել էր Տրպատունիք գաւառից և գետից (այժմ Խոշաբու)։ Այս «բարբարոս» հնչիւնը, պ. Սաֆրաստեանի կարծիքով չէր կարող իւրացնել Քսենոփոնը, ուստի եւ փոխարինել էր Հերոդոտից (V,59) առած Տելէբոս բառով, որ անունն էր Կապրի կղզու համանուն գետի։ Պ. Սաֆրաստեանի կարծիքով, Քսենոփոնը այդ փոփոխութիւնը կատարել էր չնորհիւ իր մտաւոր բարձր զարգացման։ Մեղ թւում է, ընդհակառակը, որ հէնց նոյն այդ բարձր զարգացումը թոյլ չպիտի տար Քսենոփոնին վանի մօմ գտնուող մի գետ կոչել Կապրի կղզու գետի անունով։ Քը սենոփոնը կարող էր իր ականջին խորթ հնչող բառը զրել աղջատւած, բայց կեղծել՝ հազիւթէ, թէկուզ այդ «կեղծիքը» ապագային եւ հեշտացնէր պ. Սաֆրաստեանի դորձը։

Քսենոփոնի վերագրւած թեթեւամտութիւնը ստիպել է պ. Սաֆրաստեանին բռնութիւն գործ դնել Քսենոփոնի բնագրի վերաբերմամբ, եւ այդ ամենը յանուն ի՞նչ նպատակի — ինձ համար մը-նում է անհասկանալի։ Դժբախտաբար, իր պատասխանով էլ, պ. Սաֆրաստեանը չի կարողացել փարատել իմ կասկածը։ \*)

### Յ. Զ.



\*) Պ. Սաֆրաստեանը իր յօդւածին կցել է իւ մի քարտէս, որ ցայց է տալիս յայթերի անցած նամապարեր արեւելեան ուղղութեամբ։ Ըստ այդ քարտէսի, յայթերի կտրած նամապարեր 107 անգլ մղոն է կամ 172 կիլոմետր։ Քսենոփոնի հաշուվ այդ նամապարեր եաւասար էր 17 փարսալի, այսինքն՝ ամենալաւ դէպքում, 75 կիլոմետրի։ Հապա ո՞ւր է նամապարերի մնացած մասը։